որ քնուց վեր էլաւ, տեսաւ էտոյ թղթի վրայի ոսկուաթն հա-մայ՝ խելքն գնաց, արուն էլ քթից վաթաւ էկաւ։

11. Սանասարն էլաւ ախուր տեսաւ, որ ուր ախպօր ատտղն նվաղեր էր, անճալ[1] կտոր մը խոտի մնացեր էր մէջ. վազեց գնաց Պաղտասարի յէօտէն. ոսկուաթն որ էն տեղ տեսաւ ծա-կեց իտի ուր ծոց. ախպէրն խանեց վեր, քիթ բէրան լվաց։ Պաղտասարն էլ չխարցուց էն պատկերք, վազեց գնաց ճան խա-ղալ։ Սանասար գնաց մօտ մէր։ «Ասաց, մարէ, եմ պատրաս-տութեն տես, ես պիտի էրթամ Քեռչանց երկիր. թուղթ իկե եմ իտե»։—Մէրն ասաց, ոտրի. մի էրթայ, էն երկրէն մնճալ վաթանք էկանք։—Տղէն ասաց չէ՛, պիտի էրթամ, թէ որ իմ գլէօխն էլ գնացեր ի։ Մէր պատրաստութեն տեսաւ պածաւ. Սանասարն էլ թաւաւ ձին, խէծաւ։ Հա՛մայ քշեց տեխ Քաչանց երկիրը։

12. Խասաւ չորս ճամխայ խառնուրտի մը մէջ, տեսաւ որ մի ըղթիար մարդ մը նստէ էնտեղ. «Ասաց, բարեւ քե պա-պալխ»[2]։—Աստծու բարին քե Սանասար, ասաց խալիւորն. տէ ձիուց իջի վէր, քե խօսք մը ունիմ ասելու։—Պապա ասաց տիւ-վա՞վ ես, որ ձիկ կճանչնաս։ Թէ ես Սանասարնեմ։—Ասաց՝ ես եմ խրեշտակն Աստծուն, որ նստեր եմ ըստեղ ճամպախներ կըռժնեմ։ Տրո՞ր պիտի էրթաս Սանասար։—Ասաց կէրթամ Քեռ-չանց երկիրը. ձիկ մէկ բարի ճամպախ մը նշանց տուր։—Էն էլ ասաց, թէ էսայ ճամբախն էրթաս, կէլնիս թագաւոր. թէ որ մէկալ ճամպախն էրթաս, կէլնիս թիւճար[3]. ամայ՝ թէ որ էր-թաս Քեռչանց երկիրը՝ էն տեղ վնաս կը քաշես։—Սանասարն ասաց էն տե՛խ[4] պիտի էրթամ, թէ որ գլխնամ իմ վիզ իրեք տեղով կտրեն։ Թէ որ ուրիշ խըրատ մը ունես ձիկ ասա։ Էն էլ ասաց. «Որտի, որ կէրթաս. ինչոր քե ռաստ կուգեայ[5] թէ քար՝ թէ թիւփ, թէ յայվան[6], թէ ճանավար[7], ըմէնուն էլ բարեւ տաս, առանց բարեւի չընցնես. թէ որ առանց բարեւի ընցար, էն երկիր ոէհրի[8] ի քե շատ վնաս կուտայ»։

13.—Սանասարն ասաց. մնացիր բարի, էլաւ խէծաւ համայ քշեց տեխ Քաչանց երկիր։ Գնաց չուռմ քեաղաք. հասաւ թա-գաւորու խասս պաղչէն. տեսաւ որ Սիւաւթ խաթուն խետ քեառասուն խալայեխի վեր ախպրին նստեր էր, էլաւ Սանասարի դիմաց, տեսաւ ըսկուն խօրօ՛տէր, որ էրազի մէջ տեսածէն եօթնապատիկ աւելի էր։—Ասաց, Սա՛նասար, խազար ափսո՛ս քըռոյ ճախէլութնին, որ էլար էկար իմ իտև։—Ի՛նչ տիմացավ ափսո՛ս կասես։—Սիւաւթ խաթիւն ասաց, էն ապրվ, որ կվախ-

---

1 Հազիւ։ 2 Պապ։ 3 Վաճառական։ 4 Դեմ, կողմ։
5 Հանդիպեր 6 Անասուն։ 7 Գազան։ 8 Հմայող։